ԺԲ.

ՊՈՈՇՅԱՆՑ ՎԵՐՋԻՆ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԸ ՅԵՎ ԻՍՐԱՅԵԼ ՈՐԻ

Պոոշյանց տոհմի մասին արձանագրություններն ու հիշատակարանները վերջին անգամ խոսել են սկըսում ԺԷ. դարու յերկրորդ կիսին։ Մենք հիշել ենք, (յեր. 104), վոր Պոոշի շինել տված Գեղարդի պահարանը 1687 թվին նորոգել է ավել նորա շառավիղներից մեկը՝ Գեղարդա վանքի առաջնորդ Դավիթ վարդապետը։ Պահարանի հետևում նա տալիս է թե Պոոշի նախկին արձանագրության պատճենը և թե յուր կողմից ավելացնում է նորոգության հանգամանքները նոր արձանագրությամբ (պատկ. 28. Հավել. Ա. 15)։ Այստեղ նա տալիս է տեղեկություններ յուր ծնողների և հարազատների մասին. նա Այրիվանքի սուրբ ուխտի առաջնորդն է, «յաղգէն Խաղբակա եւ Պոոշա, որդի Ինանիկին». նորա հորեղբայրներն են Դավիթ յեպիսկոպոս և Ստեփանոս վարդապետ, վորոնք վախճանված են արդեն, իսկ յեղբայրներն են՝ Բեկ սոսի և Կիրակոս, քույրը Մարիամ։ Հիշված են նաև պահարանի կազմող վոսկերիչները՝ Գրիգոր և Սարգիս։ Բայց ավելի ընդարձակ տեղեկություններ ստանում ենք մի Հայսմավուրքի հիշատակարանից*, վոր գրել է տվել վոմն Յերեմիա քահանա, տեր Զաքարիայի խնամակալությամբ. «զի ես մանուկ գոլով, որբ մնացի ի հօրէ, և այս տէր Զաքարիայս եղև ինձ հայր, տարաւ զիս ի սբ վանքն Գեղարդի, և անտի եմ ենեալ և ուսել ի տէր Զաքարիայէն»։ Յուր և յուր կողակից Խանազելի, ծնողների՝ Զաքարիայի և Շաղոսկու հիշատակին տալիս է այս ծաղկավետ մատյանս «ի սբ վանքն ածամուխ գեղարդին». «ի ձեռն Դաւիթ սրբանուէր վրդպտի... առաջնորդ և վերատեսուչ սբ ուխտիս». միաբաններին խնդրում և խնամքով պահել այս սուրբ մատյանը կրակից և ջրից և տարին յերեք անգամ՝ Զրորհնյաց և Հայտնության, Զատկին, Աստվածածնի փոխման տոներին կարդալ յուր հիշատակարանը, վորի մեջ նշանակված են յուր մերձավոր և հեռավոր բոլոր ազգականների անունները։ Հայսմաւուրքի գրելու, ծաղկելու և կազմելու բոլոր ծախսերը հոգացել է տեր Զաքարիան յուր չքավորությամբ, բայց «ի հալալ և ի քաղցր վաստակոցն և ի քրտանց երեսացն, որ ի հոգագործութիւն էր վաստակեալ, ինքնին ձեռօքն և ոտամբն և թիկամբն»։ Գրված է Գրիգոր Յերևանցու ձեռքով, վոր ուրիշ ձեռագիրներ ևս ունի գրած**. սկիզբն ու վերջը Վաղարշապատում, իսկ մեծագույն մասը «ի գիւղաքաղաքն Նորագաւիթ»։ Հիշատակարանի հեղինակն և Սուքիաս քահանան «ի գիւղաքաղքէն Գառնուոյ», վորին և պարտական ենք պատմական կարևոր տեղեկություններ ժամանակակից Պոոշյանների և դեպքերի մասին։ Նկարիչն և նույն Գրիգոր Յերևանցին, բայց մեծ պատկերները իրենց սկզբնապարդերով, Մովսես ծաղկող*։

Հայսմ. № 1512, 206բ.
Պատկեր III.

Հեղինակը Գեղարդի ժամանակակից առաջնորդին անվանում է «Դաւիթ փոքր», «ի մեծ և յազատ իշխանաց տոհմէ, ի զաւակէ և ի թոռանց մեծին Պոոշի», իսկ նույնանուն հորեղբորը «մեծ Դաւիթ», «որ յառաջ քան զայս առաջնորդ էր սբ վա-

* Զեռ. Էջմ. № 1501/1512 (Կար. 1643). տպ. Ա-բարատ 1888. 526. Հավել. Բ.

** Զեռ. Էջմ. № 548 (Կան. 534) կարևոր հիշատակարանով Յեղիազարի կաթուղիկոսության և Յերևանի մեծ շարժի մասին 1686 թվին գրված։

* Արվեստը բարձր չէ, բայց ժամանակի դրոշմն է կրում և պարսկական ազդեցություն, հատկապես լուսանցքի ծաղիկների և անոթների նկատմամբ, վոր պարսկական կապույտ զարդերով յախճապակիներ են. 111-րդ նկարը գաղափար է տալիս այդ մասին։ Պատկերագրությունը, լուսանցքի զարդերը չկորցնելով իրենց արևելյան բնույթը, ազդված են կաթոլիկ արվեստից, հավանորեն ժամանակակից միսիոնարների միջոցով։ Ժամանակակից վարդապետների տարազը (98բ) հար և նման Յեղիազար կաթուղիկոսի վորմանկարին Գայանեղի գավթում։ Կոստանդիանոս թագավորը թեև թագով, հագել է յերկար, զարդարուն, նեղ թեզանիքներով կապա, և վերան կարճ թևերով մուշտակ ժամանակակից մի խանի կամ շահի նման։

Մովսես ծաղկողի արվեստը ավելի չէ ազդված արևմուտքից յուր շարադրության ձևով. 2բ. Լուսավորիչ զգեստավորված, հովվական գավազանով, իսկ Տրդատ ծունկի չեկած նորա առաջ. նույն բովանդակությամբ, բայց տարբեր ձևակերպությամբ 4բ։ Աստվածածնի ննջման պատկերը 10բ. նման չէ մեր մանրանկարչության մեջ ընդունված ավանդության. մեռած Աստվածածնի ձեռքն ել մոմ է տված, և առաքյալները պարզ կապայի վերա փիլոն են ձգած։ Խաչվերացի պատկերը շատ ավելի վորոշ է յուր կաթոլիկ ազդեցությամբ. ներքևը վոչ հայկական մի տաճար, վերևը խաչափայտը բոլոր գործիքներով և լատինական վերտառությամբ։ Վերջապես 235բ ծնունդն է, դարձյալ սովորականից տարբեր ձևակերպությամբ, իտալական նկարիչների հետևողությամբ, տակը գրված. «Ով տիրամայր սբ Թագուհի, | մաղթեմ առ քեզ արտասուալի | Մովսես ծաղկող սորի»։